ՄԱՅՐ ԱԹՈՌ

Վեհ. Կաթողիկոսը Կովկասի Տէր Փոխարքայ պայծառափայլ կոմս Վորոնցով-Դաշկովից ստացել է 1912 սեպտեմբեր 21 թուակիր № 21004 հետևեալ նամակը.

Նորին Վեհափառութեան Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգին.

Ձերդ Սրբութիւն.

Սոյն սեպտեմբերի 10-ի № 1017 նամակի հետևանքով՝ պատիւ ունիմ տեղեկացնելու Ձերդ Սրբութեան, որ թոյլ եմ տալիս, սկսած տարւոյս հոկտեմբերի 1-ից, մի տարուայ ընթացքում Կովկասի փոխարքայութեան սահմաններում յօժարակամ նուէրների հանգանակութիւն կատարել դպրոցական ֆոնդ կազմելու համար յօդուտ հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների։

Հայցելով Ձեր հովուապետական աղօթքները, խորին յարգանքի զգացմունքով և լիակատար անձնուիրութեամբ՝ պատիւ ունիմ լինելու Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ ծառայ

ԿՈՄՍ ՎՈՐՈՆՑՈՎ-ԴԱՇԿՈՎ

ՑՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Հայ գրի եւ տպագրութեան այս Մեծ Յոբելեանը արժանավայել ու փառաւոր տօնելու, տօնի նշանակութիւնն ու պատմական արժէքը ժողովրդականացնելու, այլ եւ Մեծ Յոբելեանը զանազան հասարակական ու անհատական ձեռնարկութիւններով յաւերժացնելու համար Էջմիածնի Յոբելենական Յանձնաժողովը որոշեց դիմել Վեհափառ Կաթողիկոսին եւ խնդրել, որ բարեհաճի առաջիկայ տարին յայ-

տարարել Յոբելենական Տարի, ինչպէս որ դա նման դէպքերում՝ սովորական է Եւրոպայում։

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց յարգել Ցանցնաժողովիս խնդիրը եւ պատուիրեց բաց անել Յոբելենական Տարին այս աշնան՝ Թարգմանչաց տօնին, հոկտեմբերի 13-ին, ինչպէս որ արդէն յայտարարուած է։ Բացման հանդէսները ամեն տեղ կատարուելու են Էջմիածնի Յոբելենական Ցանցնաժողովի մշակած ծրագրով։ Իսկ առաջիկայ տարուայ աշնանը, դարձեալ Թարգմանչաց տօնին, կը լինին մեծ հանդիսաւորութեամբ Յոբելենական Տարուայ փակման հանդէսները։

Յոբելենական Տարուայ ընթացքում՝ հնարաւորութիւն կը տրուի բոլոր հաստատութիւններին, համայնքներին, ուսումնարաններին ըստ տեղի ու ժամանակի յարմարութեան՝ զանազան հանդէսներով, դասախօսութիւններով եւ այլ ձեռնարկութիւններով իւրովանն մասնակցել տօնախմբութեանը։ Այդ ժամանակուայ ընթացքում՝ հնարաւորութիւն կունենանք ֆոնդերի գործը առաջ մղելու եւ զանազան գրական, գիտական եւ ժողովրդական հրատարակութիւններով տօնի յաւերժացմանը նպաստելու։ Շատ ցանկալի էր նոյնպէս աշակերտական եւ մեծերի էքսկուրսեաներ եւ ուխտագնացութիւն կազմակերպել դէպի ս. Մեսրոպի հանգստավայրը՝ Օշական։

Սրանով խնդրում ենք բոլոր վայրերի հայ հասարակութեանը իւր կարողութեան չափով նպաստելու փառաւոր կերպով տօնելու մեր գրի եւ գրականութեան, գրքի ու տպագրութեան այս եզակի տօնը։

Ս. Էջմիածնի Յոբելենական Ցանցնաժողովի նախագահ՝

Գալուստ Տէր Մկրտչեան.

Անդամ քարտուղար՝ **Գէորգ Ալթունեան.**

Սուրբ Միւռոնի օրհնութեան համար Ռուսաստանի Հայոց բոլոր թեմական առաջնորդները և թեմերի կառավարիչները Վեհ. Կաթողիկոսից հրաւիրուած էին գալ Մայր Աթոռը։ Արդէն ժամանել են Տ. Ներսէս արքեպիսկոպոս, առաջնորդ Բեսսարաբիայի թեմի. Տ. Մխիթար եպիսկոպոս, առաջնորդ Աստրախանի թեմի. Տ. Անանիա արքեպիսկոպոս, առաջնորդ Շամախու թեմի. Տ. Եփրեմ եպիսկոպոս, ժամանակաւոր կառավարիչ Վրաստանի և Իմերեթի թեմի, Տ. Խորէն եպիսկոպոս, փոխ—թեմական Երևանի թեմի. Տ. Զաւէն վարդապետ, ժամանակաւոր կառավարիչ Արցախի թեմի։

Նոյն առթիւ Մայր Աթոռն է եկել նաև Տ. Սարգիս եպիսկոպոս, վանահայր Սևանայ անապատի։

Տ. Կարապետ եպիսկոպոս, որ հինգ տարուց ի վեր վարում էր Ատրպատականի թեմի առաջնորդութիւնը, օգոստոսի վերջերին հրաժարուել է իր պաշտօնից. Վեհ. Կաթուղիկոսն ընդունելով նրա հրաժարականը՝ թաւրիզ է ուղարկել Տ. Ներսէս վարդապետ Մելիք-Թանդեանին՝ առաջնորդական ընտրութիւն կատարելու։ Տ. Կարապետ եպիսկոպոսն այժմ Մայր Աթոռում է

Ուղղում

«Արարատի» նախորդ համարում Վեհ. Կաթուղիկոսի օծման հանդէսին եկած պատգամաւորութիւնների ցուցակի մէջ Տ. Գիւտ քահանայ Աղանեանի համար վրիպակով տպուած է, թէ նա պատգամաւորել եղել է «Հրատարակութեան վանուց եկեղեցոյ թանգարանի կողմից»։ Արժ. Տէր Հայրը պատգամաւոր է եղել Թիֆլիսի կաթողիկոսական ընդունելութեան Յանձնաժողովի, Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերութեան և Վանայ եկեղեցու կրօնապատմական թանգարանի Մնայուն Յանձնաժողովի կողմից։